«Il nostro collega tenta dimostrare che la luce zodiacale, non è altro che l'atmosfera scaldata tropicale della terra, illuminata dai raggi solari.

«Cosicchè a tale luminosità si potrebbe dare il nome di LUCE TROPICALE[1]».

---

1. Le P. Choren M. Sinan, à Ismidt (Turquie d'Asie), adresse une longue étude, extrêmement documentée, sur la lumière zodiacale, dans laquelle il expose l'état de nos connaissances sur cette pâle lumière.

Notre collègue essaie de montrer que la lumière zodiacale n'est pas autre chose que l'atmosphère échauffée tropicale de la Terre, illuminée par les rayons solaires. On pourrait ainsi lui donner le nom de «lumière tropicale».

P. CHOREN SINANIAN

Հ. Ղ. Մ. Ալիշանի անտիպ գործերէն մին ի լոյս ընծայելու դիտաւորութեամբ, կը սկսինք շարունակել սոյն իւր հանճարեղ մտքին ծնունդ՝ գրաբար իմաստներու շարքը տպագրել Բազմավէպիս մէջ, որուն զանազան հատուածները 1909 Բազմավէպի 109, 161, 200, 246, 298, 351, 399, 460, 518 եւ 1910ին, 235 էջերուն մէջ տպագրուած են։ ԽՄԲ.

ԱՌԺԱՄԱՅՆ

ՄՏԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՔ

ՄԱՐՏ

1. — *Ի վերայ ամենայն բարեացն զոր արար Աստուած՝ աղքատագոյն է ի վերայ երկրի։*

3. — *Բազում մատեանք ի գիրկս մատենագրացն մեռանին։ Եւ է որ ծնող և թաղող լինի նմին։*

3. — *Ժամացոյց յաշտարակս՝ թուի ազատ բաշխել և սփռել զժամանակ։*

4. — *Յորժամ ցաւով և վշտօք մաշի սիրտ նման պատրուգի, այնուհետև կայծ մխիթարութեան մերձեալ ի նա՝ ի մոխիր դարձուցանէ՝ առ ի չգոյէ իւղոյ։*

5. — *Զամենայն պայծառութիւն կենաց՝ գիշեր մի մթնէ։*

5. — *Այո՛ ամենայն ինչ կորնչի բաց յԱստուծոյ։*

5. — *Բազում այն է զի մահ վարդ ընծայէ, այլ երկիւղ փուշ կարծէ։*

5. — *Աստուածութիւն յուսոյ և մխիթարութեան՝ Մարիամ։*

5. — *Ողջունելո՛վ սկսանիմ մաղթել առ կոյսն։*

7. — *Շիթ մի են կեանք մարդոյ, կամ ծորէ կամ ցամաքի։*

8. — *Անարժան քահանայ զԱստուած իւր փողոտէ։*

8. — *Որչափ զօրոզն յերկինս ամբառնայ զճակատ՝ մերձեցուցանէ առից Աստուծոյ. որչափ ոք յերկիր խոնարհեցուցանէ՝ դիւրահնուպ զտանի ձեռին կարկառեալ յերկնուստ։*

digitised by A.R.A.R.@

8. — *Խոնարհն զպարանոց իւր կամուրջ արկանէ ընդ երկիր և ընդ երկին. հպարտն կանգնէ ուպէս զկաղնի նշաւակ հողմոց։*

12. — *Մոռացութիւն՝ յեղյեղուկ չքութիւն։*

13. — *Ողորմութիւն խունկ անոյշ է, ի ձեռս աղքատաց բուրէ ի վեր։*

14. — *Հուր հեշտութեան՝ եթէ ոչ շիջուցի, զգազախեալ ղողի և ի մոխիր ծերութեան։*

19. — *Աչք՝ դէտք բարձունք, բերան՝ քարոզ, ձեռք՝ պաշտօնեայք, ոտք՝ կառք, կամքն՝ ուղղիչ։*

19. — *Հուր մոխրով պահի և մոխրով շիջանի. կեանք ի մահ գնայ և մահուամբ սնանի։*

23. — *Ապակի ի մի կէտ ամփոփէ զարեգակն, և սիրտ զԱստուած։*

25. — *Ի բարկութեան՝ զղև միայն յիշես առ մեղուցելոյն, զի՞ ոչ յիշես և զհրեշտակն նորա առընթերակաց։*

26. — *Հաւատք առանց սիրոյ, բոյս անծաղիկ։*

ԱՊՐԻԼ

3. — *Ոչ բժշկեն զծարաւ՝ ջուրք ի պատկերի։*

3. — *Հաւատք ռահվիրայ են, յոյս ձեռնկալու մինչև ի մահ, սէր անբաժ կայ։*

7. — *Խանդումանդ է հեշտութիւն, որ շփի հաղորդէ և յայլս զզօրութիւն իւր։*

7. — *Դոյզն լծակ բառնայ բեռինս դժուարակիրս, և կամք հեզ զծանր սազբտանս։*

11. — *Ոչ այնպէս երագ հասանէ փայլակն՝ որպէս հաճութիւն աչաց ի սիրտ սիրելւոյ։*

15. — *Բոպէացոյցն ի ժամու՝ բոլորէ զշրջանակն, իսկ ժամացուցակն զմասն մի նորին, և ժամանակ նոյն է. կեանք մեր նման են բոպէացուցին, յաւիտենականութիւն ժամացուցին։*

16. — *Ամենայն ջրանցք թէպէտ և փոքր՝ ի ձեռն այլոց գնան յովկիան. այսպէս և ամենայն իղձք մեր ի յաւիտենականութիւն։*

17. — *Ծուլութիւն ոչ միայն շղթայակապ առնէ զմարդ, այլ և զտենչ բառնայ թօթափելոյ զշղթայսն։*

17. — *Ջվէմ արաստոյ ի մարդ փոխեմք, զկամս յամառեալս չկարեմք կակղել։*

18. — *Սիրտ քաջալանջ՝ ամուր քան զամենայն վահան։*

19. — *Ցոյս ամփոփէ զոլորտս, և զհայրենիս մերկ կացուցանէ։*

21. — *Հեշտութեան սպունգ՝ մարմինք գրգասունք։*

23. — *Կանաչ վարագոյրք ի միջօրէի՝ վարսաւոր բարունակք։*

25. — *Կիկերոն գրասեղան փայտեղէն ունէր 210.000 ֆրանգաց, Սենեկա 63.000.000 ֆր. և չկարացին ապրեցուցանել ոչ զազգն և ոչ զկեանս իւրեանց։ Իսկ Պետրոս ուռկան արկանէր, Պօղոս խորան կարէր, և հովանեօք և թաշկինակօք հիւանդս բժշկէին։ Նա յուռկան ձգէր զհրէայս, սա ընդ խորանաւ Քրիստոսի զհեթանոսս։*

25. — *Հաւք զփետուր, ծառք զտերևս, լուսին զմահիկ փոխէ. մարդ զկեանս ընդ մահու։*

27. — *Շիթք ջրոց ի մակարդակի միաձոյլ հոսեն, և մեղք միացեալ ի սրտի՝ հոսեն ի դժոխս։*

digitised by A.R.A.R.@

30. — Ի ցամաքել հասկաց՝ ընծայի ցորեան, ի պարապել մարմնոյ պտղաբերէ հոգին։

ՄԱՅԻՍ

1. — Սերմանել պարտ է ի մանկունս և ոչ տալ սերմանել. զի չգիտեն մանկունք խորել։

2. — Ցանուն մահու քանի՛ աշխոյժք կենդանանան։

3. — Սիրոյ չիք չափ և կանոն, այլ ինքն է չափ ամենայնի։

4. — Բանաստեղծի անկ է նմանել արեգական, տալ ամենայնի տիպս կենդանիս և գեղեցեալ։

5. — Ամենայն շունչ հեշտին՝ խորշակ է անփոքր սրտից։

5. — Ցառաջ քան զորդին՝ զանձն պատարագէր Աբրահամ։

5. — Սիրտք մեկնակ գայլախազ են կամ երկաթ հրահան. հարեալ յիրեար հուր ցայտեն։

6. — Դրամ յեղեղուկ ծախէ զամենայն ինչ, և ինքն անծախ կայ։

6. — Ոչ տեսաւ ուրկան ի լոյզ կամ ձուկն ի թռիչ, այլ մարդ ել ըստ սահման իւր։

7. Դրամ պահեալ՝ սերմն ի շտեմարանի. իսկ սերմանեալ բերէ տոհմականս։

7. — Պարտատէր է մահ, թէպէտ և ոչ ամենեքին պարտականք երևիցին։

9. — Գառն օձամարտ, Յիսուս ընդդէմ նախնոյ օձին։

12. — Ադամ զհոգին Քրիստոսի ոչ պահեաց ամբիծ, Յիսուս զմարմին Ադամայ անախտ պահեաց։

12. — Ցէջան իջոյց Քրիստոս զերկինս, յելան զերկիր ի վեր տարաւ։

13. — Լօթնազոյն կամարք տապանին եկեղեցւոյ՝ շնորհք Հոգւոյն։

13. — Անդաղար շարժումն և զառածանք՝ սէր։

16. — Ցաչս զղջականս փայլակեա զգթութիւն և վառեսցի ծիածան հեզութեան և երախտեաց։

20. — Իսահակ գնայր՝ որպէս զգառն հայցէր. միանգամ ձեռն ձգեաց ի նա հայրն՝ այլ զանձն յար զոհէր։

21. — Աստուած ամենեցուն տայ չափով ձէթ շնորհաց, են որ կանթեղս կանթեղս յարդարեալ լուսաւորին, այլք մի միայն պատրոյգ դնեն և աղօտանան. և շիջեալ՝ անպէտ կայ ձէթն. իսկ այլոցն թէպէտ և մին շիջցի՝ լուսաւորի այլովք և նոքիմբք լուցանէ զշիջեալն, ցուցանէ զլաւութիւնս։

22. — Վեհ է որ ելանէ յերկինս, վեհափառ՝ ում երկինք խոնարհին ի վերելս։

27. — Հաւատք իւղ են օծման, թշնամին չկարէ բուռն արկանել ի նա։

27. — Ստուեր Աստուծոյ է մարդ, տակաւ ի լոյս նորա փոխիւ։

27. — Հայելի պայծառ վարուց մերոց՝ քան զուղղութիւնս և զթերութիւնս այլոց։

30. — Անմիտն ոչինչ շահի յիմաստնոյն. իմաստունն խելամտէ և յանմտութենէ անմտին։

31. — Այլայլութիւն վարուց այլայլէ զդէմս մահուն։

ԱԼԻՇԱՆ

digitised by A.R.A.R.@